Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. սպացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ.՝ դոցենտի գիտական կոչում: 2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է: 2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ-ում, 2023 թ.-ից՝ Երևանի պետական համալսարանում և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

130-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ ինը մենագրության և երեք ուսումնական ձեռնարկի հեղինակ է և համահեղինակ, ինչպես նաև մեկ բուհական դասագրքի հեղինակ: Հոդվածներից 18-ը տպագրվել է Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ. ՀԻՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐ

DOI: 10.52174/2579-2989_2025.1-42

Հիմնաբառեր. *հյուրանոցային տնտեսության օբյեկտ, հյուրանոց, հյուրընկալության արդյունաբերություն, կայուն զարգացում, որակավորում, թվային տեխնոլոգիաներ*

Հյուրանոցային արդյունաբերությունը, որպես զբոսաշրջիկների համար գիշերակացի և սպասարկման հիմնական տարր, վճռորոշ դեր է խաղում զբոսաշրջության ոլորտի զարգացման մեջ: Վերջինս ապահովում է ոչ միայն կացության պայմաններ, այլև հանգստին, ժամանցին և բիզնեսին անհրաժեշտ ենթակառուցվածքներ:

Հոդվածում անդրադարձ է կատարվում հյուրանոցային արդյունաբերության զարգացման պատմական ընթացքին՝ սկսած հին արևելյան քաղաքակրթություններից մինչև մեր օրերը: Վերլուծվում են հյուրանոցային ծառայությունների ձևավորման հիմնական փուլերը և զարգացման արդի տեմպերը, կայուն զարգացման գործելակերպի և նորարարական տեխնոլոգիաների կիրառման միտումները հյուրանոցներում: Ներկայացվում են համաշխարհային և հայկական հյուրանոցային ոլորտի արդի վիճակը, զարգացման հեռանկարները՝ կայուն սոցիալ-տնտեսական և տարածքային համաչափ զարգացման համատեքստում:

Հյուրանոցային արդյունաբերությունն ունի զարգացման հին պատմություն: Առաջին հյուրանոցները՝ քարվանսարաները, առաջացել են մեր թվարկությունից 2000 տարի առաջ հին-արևելյան քաղաքակրթությունում: Հին Հունաստանի և Հին Հռոմի ժամանակաշրջանում ստեղծվեցին և տարածվեցին հյուրանոցների նախատիպ հանդիսացող իջևանատներ, պանդոկներ, փոստային կայաններ՝ նախատեսված ճանապարհորդող առևտրականների, հոգևորականների և այլոց համար[1]:

[1] Зорин И.В., Каверина Т.П., Квартальнов В.А. Туризм как вид деятельности // Учебник. М.: Финансы и статистика. 2005., с. 164.

Պանդոկների մասին առաջին գրավոր վկայությունը գալիս է Հին Հունաստանից և Հին Հռոմից: Դեռևս Բաբելոնի թագավոր Համմուրաբիի օրենսգրքում ամրագրված էր պանդոկների գոյության փաստը: Պայմանավորված առևտրի զարգացմամբ՝ անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու գիշերակացի տեղեր առևտրականների համար, ինչի արդյունքում առաջացան իջևանատները: Հին Հռոմում իջևանատները կառուցվում էին իրարից 25 մղոն[2] հեռավորության վրա, որպեսզի ճանապարհորդները շատ չհոգնեին ճանապարհներին և կարողանային, որքան հնարավոր է, շուտ հանգստի տեղ գտնել[3]:

Միջին դարերում սովորական մարդկանց գիշերակացի ծառայություններ էին մատուցում կրոնական կառույցները: Այդ ժամանակ ճանապարհորդները հիմնականում ուխտավորներ ու քահանաներ էին: Չնայած իջևանատների քանակի աճին՝ միջին դարերում դրանց ծառայությունների մակարդակը շարունակում էր ցածր մնալ: Հանգստացողները քնում էին հատակին, իսկ սնունդը միատարր էր: Իջևանատները գոյատևել են մինչև 19-րդ դարի կեսերը: Երկաթուղային ճանապարհների կառուցումը կանգնեցրեց իջևանատների տարածումը, իսկ մեքենաշինական արդյունաբերության զարգացումը հանգեցրեց ճանապարհներին տեղակայված հյուրանոցների՝ մոթելների ստեղծմանը:

18-րդ դարում հյուրընկալության ոլորտի տարբեր կազմակերպություններ հիմնադրվեցին ԱՄՆ-ում: Ժամանակակից ընկալմամբ առաջին հյուրանոցը բացվել է 1794 թվականին՝ Նյու Յորքում և կոչվել «Սիթի»՝ ունենալով 70 սենյակ[4]:

Ընդհանրական ձևով, հյուրանոցային գործի առաջացման և զարգացման պատմությունը կարելի է բաժանել 4 հիմնական փուլերի.

1. Մինչև 19-րդ դարի սկիզբ, որը համարվում է հյուրանոցային գործի նախապատմություն, երբ մարդկանց տեղաշարժը կապված էր առևտրական, կրոնական, կրթական և այլ նպատակների հետ:
2. 19-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի սկիզբ, երբ ստեղծվեցին հյուրանոցային ծառայություններ մատուցող տարբեր տեսակի կազմակերպություններ:
3. 20-րդ դարի սկզբից մինչև 20-րդ դարի կեսեր, երբ ծառայությունների ոլորտի կազմակերպությունների թիվն աճեց, բարձրացավ մատուցվող ծառայությունների որակը: Սակայն, առաջին և երկրորդ համաշխարհային պատերազմները բացասական ազդեցություն ունեցան հյուրընկալության արդյունաբերության զարգացման վրա:
4. 20-րդ դարի կեսերից մինչև մեր օրեր, երբ ձևավորվեց հյուրընկալության արդյունաբերությունը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո հյուրընկալության արդյունաբերությունը շատ վատ վիճակում էր, շենքերի մեծ մասը՝ քանդված, և չկային անհրաժեշտ ռեսուրսներ դրանց վերականգնման համար: Հյուրանոցային արդյունաբերության հետագա զարգացումը տեղի ունեցավ միայն հետպատերազմական տարիներին: 1950-1960 թթ. Արևմտյան Եվրոպայի երկրներում առաջացան ժամանցային և զվարճանքի առաջին համալիրները[5]: 1970-ականներից հետո սկսեցին տարածվել նաև հյուրանոցային ցանցերը՝ սպասարկման նոր որակ հաղորդելով հյուրընկալության արդյունաբերությանը:

Հարկ է նշել, որ ներկայումս հյուրանոցային արդյունաբերությունն աչքի է ընկնում զարգացման մեծ տեմպով: Ինչպես վկայում է վիճակագրությունը, 2024 թ. հյուրանոցային և կուրորտային արդյունաբերության շուկայական արժեքն աշխարհում 1.5 տրիլիոն ԱՄՆ դոլար էր, իսկ ամենաբարձր շուկայական արժեքն ունեցել է «Մարիոթը»: Հյուրանոցային բեռնվածության տարեկան միջին ցուցանիշն աշխարհում կազմել է 68 տոկոս[6]:

Ամենաշատ հյուրանոցներ ունեցել է

[2] Հռոմեական երկայնության չափ՝ հազար (1000) քայլ:
[3] Елканова Д.И., Осипов Д.А., Романов В.В., Сорокина Е.В., Основы индустрии гостеприимства, Учебное пособие. - М.: Дашков и Ко, 2010., с. 9.
[4] Նույն տեղում, էջ 10-11:
[5] Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն), Երևան: «Մեկնարկ» ՍՊԸ, 2020, էջ 21-24:
[6] Hotel industry worldwide - statistics & facts, https://www.statista.com/topics/1102/hotels/#topicOverview

ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

Առաջատար հյուրանոցային ընկերություններն աշխարհում՝ ըստ հյուրանոցների քանակի, 2023 թ.[7]

Wyndham Hotels & Resorts-ը՝ 9059 հյուրանոց, այնուհետև Mariott International-ը՝ 8353 հյուրանոց:

Hilton-ը 2023 թ. ամենաթանկ հյուրանոցային ապրանքանիշն էր, որի արժեքը մոտ 12 միլիարդ ԱՄՆ դոլար էր: Ըստ վարկանշի՝ մյուս խոշոր հյուրանոցային ապրանքանիշներից էին Hyatt-ը, Hampton Inn-ը և Holiday Inn-ը: Այս ընկերությունների ապրանքանիշի արժեքը կազմել է համապատասխանաբար՝ 6.07, 4.26 և 3.75 միլիարդ ԱՄՆ դոլար[8]:

2023 թ. դրությամբ աշխարհում եղել են առնվազն 187,000 հյուրանոց և մոտ 17,5 միլիոն հյուրանոցային համար: ԱՄՆ-ում հյուրանոցային սենյակների միջին արժեքը 120,01 դոլար է:

Համաշխարհային հյուրանոցային և առողջարանային ոլորտում աշխատում է մոտ 10,5 միլիոն մարդ: Հյուրանոցային արդյունաբերության մեջ ընդգրկված է 100,535 բիզնես, որն ապահովում է նվազագույն հյուրանոցային և այլ հարակից ծառայություններ:

COVID-19 համավարակի ընթացքում, երբ սահմանափակումներ կիրառվեցին մարդկանց տեղաշարժի նկատմամբ, հյուրանոցային բեռնվածությունը 24.5 տոկոս էր, 10 հյուրանոցից 7-ը դատարկ էր, և 2020 թ. արդեն իսկ փակվել էր հյուրանոցային ոլորտի շուրջ 670000 աշխատատեղ: 2023 թ. հյուրընկալության ոլորտը համաշխարհային տնտեսության մեջ ունեցել է 4,7 տրիլիոն դոլարի ներդրում, որը, ըստ կանխատեսումների, 2027 թ. կհասնի 5,8 տրլն ԱՄՆ դոլարի:

Հյուրանոցային ոլորտում աշխատող մարդու միջին տարիքը 35 է:

Ամերիկյան հյուրանոցներն ապահովում են 8,3 միլիոն աշխատատեղ, ինչը համարժեք է ԱՄՆ զբաղվածության 5 տոկոսին[9]:

Վերջին տարիներին ՄԱԿ-ի կողմից կայուն զարգացման 17 նպատակների իրագործմանն ուղղված ջանքերը տարածվել են տնտեսության տարբեր, այդ թվում՝ զբոսաշրջության և հյուրընկալության ոլորտներում: Ինչպես գիտենք, կայուն զարգացումը մի մոդել է, ըստ որի՝ բավարարվում են ներկա սերունդների կարիքները՝ ա-

[7] Leading hotel companies worldwide as of June 2023, by number of properties, https://www.statista.com/statistics/197869/us-hotel-companies-by-number-of-properties-worldwide/

[8] Leading hotel brands based on brand value worldwide in 2023 (in billion U.S. dollars), https://www.statista.com/statistics/732907/most-valuable-hotel-brands-worldwide/

[9] Top hotel statistics, https://www.condorferries.co.uk/hotel-industry-statistics

ռանց վտանգելու ապագա սերունդների՝ իրենց կարիքները բավարարելու հնարավորությունները: Կայուն զբոսաշրջությունը զբոսաշրջային գործունեության տեսակ է, որը հաշվի է առնում շրջակա միջավայրի, մշակութային ժառանգության, տեղական համայնքների և տնտեսության երկարաժամկետ բարեկեցությունը: Կայուն հյուրանոցը կարող ենք բնորոշել որպես զբոսաշրջային օբյեկտ, որն առաջնորդվում է բնապահպանական, սոցիալական և տնտեսական կայունության սկզբունքներով՝ նվազեցնելով իր ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և նպաստելով համայնքի զարգացմանը:

Հաշվի առնելով կայուն զարգացման գործելակերպի լայն տարածումը հյուրընկալության ոլորտում՝ հարկ է ներկայացնել զբոսաշրջիկների կողմից կայուն հյուրանոցների նախընտրությունների վերաբերյալ որոշ տվյալներ

- ✓ 2023 թվականին համաշխարհային զբոսաշրջիկների 78%-ը ցանկացել է գոնե մեկ անգամ մնալ կայուն հյուրանոցային տնտեսության օբյեկտում:
- ✓ Զբոսաշրջիկների 50%-ը պատրաստ կլիներ ավելի շատ վճարելու տրանսպորտի և հյուրանոցի համար, եթե վերջիններս ավելի կայուն լինեին:
- ✓ Համաշխարհային կայուն զբոսաշրջության արդյունաբերությունը գնահատվում է 181,1 միլիարդ ԱՄՆ դոլար:
- ✓ Ամբողջ աշխարհում զբոսաշրջիկների 81%-ը կարծում է, որ կայուն ճանապարհորդությունը կարևոր է:
- ✓ Զբոսաշրջիկների 61%-ը ցանկանում է էկոտուրիզմի մասին իմանալ ավելին:
- ✓ 46%-ը հասկանում է, թե իրականում ինչպես պետք է կազմակերպել կայուն ճանապարհորդություն:
- ✓ 64%-ը պատրաստ է ընտրելու ավելի քիչ հայտնի ուղղություններ՝ շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը նվազեցնելու համար:
- ✓ Զբոսաշրջիկների 30%-ին անհանգստացնում է «գերբեռնված» զբոսաշրջությունը (over-tourism):
- ✓ 38%-ը գիտակցում է վայրի բնությանը և բնական միջավայրին սպառնացող վտանգները:
- ✓ 46%-ն անհանգստացած է ավելորդ թափոններ ստեղծելով:
- ✓ 35%-ը կարծում է, որ օդորակիչները և ջեռուցիչները պետք է կառավարվեն բանալի քարտերով կամ էներգախնայող սենսորներով:
- ✓ 32%-ը կարծում է, որ հյուրանոցապանները պետք է տեղեկատվություն տրամադրեն տեղական էկոհամակարգերի, ժառանգության, մշակույթի և այցելուների վարվելակարգի մասին:
- ✓ 27%-ը ցանկանում է հրաժարվել սենյակի ամենօրյա մաքրումից՝ ջրի օգտագործումը նվազեցնելու համար:
- ✓ 27%-ը ցանկանում է օգտվել միայն բազմակի օգտագործման ափսեներից և դանակներից՝ ճաշի և սենյակային սպասարկման դեպքում[10]:

Թվային տեխնոլոգիաների և արհեստական բանականության բուռն զարգացումը անդրադարձել են նաև հյուրանոցային արդյունաբերության վրա: Հյուրանոցային ոլորտում լայնորեն կիրառվող նորամուծություններից են թվային բանալիները, թվային վճարումները՝ հեռախոսի օգնությամբ, խելացի սենյակներն ու հոթելները, լույսի և ջերմաստիճանի սենսորները, ռոբոտների, չատբոտների օգտագործումը, արհեստական բանականության միջոցով տվյալների վերլուծությունը, կանխատեսումները և այլն[11]:

Հյուրանոցային արդյունաբերությունը Հայաստանում

Ըստ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի՝ հյուրանոցային են համարվում հյուրանոցային տնտեսության օբյեկտներում տեղաբաշխման, գիշերակացի, սննդի կազմակերպման և մատուցման հետ կապված ծառայությունները:

ՀՀ-ում օրենքով նախատեսված են հյուրանոցային տնտեսության օբյեկտների (ՀՏՕ) հետևյալ տեսակները. հյուրանոց, ապարտհոթել (aparthotel), մոթել, առողջարան, հոսթել, մասնագիտացված ճամբար կամ տուն, հանգստյան տուն (պանսիոն), ճամբարային բնակատեղի (քեմփինգ),

[10] Eco hotel trends & statistics, https://www.condorferries.co.uk/hotel-industry-statistics
[11] Hotel industry trends to watch out for in 2025, https://www.mews.com/en/blog/hotel-trends-hospitality-industry

զբոսաշրջային տուն (B&B), հյուրատուն[12]:

Հյուրանոցային տնտեսության օբյեկտները կարող են որակավորվել: Աշխարհի տարբեր երկրներում գործում են հյուրանոցների որակավորման տարբեր ազգային կանոնակարգեր: ՀՀ-ում հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումը կամավոր է: Ըստ «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման տեխնիկական պահանջները, նկարագրերը, ընթացակարգը և չափանիշները, որակավորման վկայականի ձևը և ժամկետը սահմանում է ՀՀ կառավարությունը: Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումն իրականացնում է նույն հոդվածով սահմանված կարգով ընտրված զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորումը: Հյուրանոցային տնտեսության օբյեկտներին որակավորում տրամադրող զբոսաշրջային ծառայություններ մատուցող անձանց միավորման ընտրության չափանիշները և կարգը հաստատում է Կառավարությունը[13]: Մինչ սա՝ ՀՀ-ում ՀՏՕ որակավորման ընթացակարգը սահմանվել է ՀՀ կառավարության 2004 թ. հուլիսի 10-ի «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» N946-Ն որոշմամբ հաստատված կարգով: Ըստ այդմ՝ հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման (սահմանված չափանիշներին համապատասխան) համար գանձվող պետական տուրքի դրույքաչափերը ներկայացված են աղյուսակ 1-ում:

ՀՀ-ում 2023 թ. եղել է 1140 հյուրանոցային տնտեսության օբյեկտ (2019 թ.՝ 702)՝ 12507 հյուրանոցային համարով (2019 թ.՝ 11348), աշխատողների թիվը՝ 8205 մարդ (2019 թ.՝ 5202 մարդ)[14]:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՀՀ-ում ՀՏՕ որակավորման համար գանձվող պետական տուրքի դրույքաչափեր[15]

Հյուրանոցային տնտեսության օբյեկտի տեսակը	*Տուրքի չափը*
մինչև երեք աստղ հյուրանոցի, մոթելի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան	բազային տուրքի 150 -ապատիկի չափով
չորս աստղ հյուրանոցի, մոթելի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան	բազային տուրքի 200-ապատիկի չափով
հինգ աստղ հյուրանոցի, մոթելի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան	բազային տուրքի 250-ապատիկի չափով
հինգ աստղ «Դելյուքս» հյուրանոցի համար՝ տարեկան	բազային տուրքի 1500-ապատիկի չափով
հյուրանոցատիպ հանգրվանի, առողջարանի յուրաքանչյուր աստղի համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
Հանգստյան և մասնագիտացված ճամբարի կամ տան, պանսիոնի, զբոսաշրջային, մանկապատանեկան, ճամբարային բնակատեղի (համալիրի)՝	
I կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 150-ապատիկի չափով
II կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 100-ապատիկի չափով
III կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 50-ապատիկի չափով
Զբոսաշրջային տան՝	
I կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 15-ապատիկի չափով
II կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 10-ապատիկի չափով
III կարգի համար՝ տարեկան	բազային տուրքի 5-ապատիկի չափով

[12] ՀՀ օրենքը «Զբոսաշրջության մասին», հոդված 12, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2023 թ. դեկտեմբերի 22-ին, ՀՕ-4-Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188696

[13] Նույն տեղում:

[14] ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թվականի հունվար-մայիսին, վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Եր., 2024, էջ 145, https://www.armstat.am/file/article/sv_05_24a_460.pdf,
ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-մայիսին, վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Եր., 2020, էջ 141, https://www.armstat.am/file/article/sv_05_20a_460.pdf

[15] Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացի իրականացում, https://mineconomy.am/page/306

ԱՂՅՈՒՍԱԿ 2

Կացության կազմակերպման ծառայությունների ծավալն ու ոլորտի տնտեսավարող սուբյեկտների քանակն ըստ ք. Երևանի և ՀՀ մարզերի, 2010-2023 թթ.[16]

ՀՀ մարզեր	2010 թ.		2019 թ.		2023 թ.	
	քանակը, միավոր	ծավալը, մլն դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն դրամ	քանակը, միավոր	ծավալը, մլն դրամ
Ք. Երևան	158	9,701.5	410	33,772.2	618	45,996.1
Արագածոտն	3	24.2	7	87.7	16	333.1
Արարատ	5	26.1	8	80.4	13	122.3
Արմավիր	3	73.7	15	41.7	23	109.8
Գեղարքունիք	2	63.5	39	735.9	58	948.5
Լոռի	7	76	30	354.6	44	757.6
Կոտայք	33	652.4	91	3,220.0	130	4,588.3
Շիրակ	11	108	33	576.9	46	755.8
Սյունիք	15	222.2	38	830.5	58	888.7
Վայոց ձոր	9	66.3	24	588.0	36	986.4
Տավուշ	32	237.7	74	1,506.2	98	2,719.6
Ընդամենը ՀՀ	**278**	**11,251.6**	**769**	**41,794.1**	**1,140**	**58,206.2**

Հարկ է նշել, սակայն, որ 1140 ՀՏՕ-ից որակավորման կարգ ունի ընդամենը 3-ը՝ «Մուլտի Գրանդ Հոթելը» (հինգաստղանի դելյուքս), «Անի Պլազան» և «Արարատը» (չորսաստղանի)[17]: 2003 թվականի դեկտեմբերի 17-ի «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի հիման վրա (որը ներկայումս ուժը կորցրած է ճանաչվել) որակավորված հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորումը գործում է մինչև որակավորման վկայականներով սահմանված ժամկետի ավարտը: Ժամկետի ավարտից հետո տվյալ հյուրանոցային տնտեսության օբյեկտները որակավորվելու են «Զբոսաշրջության մասին» ՀՀ գործող օրենքով սահմանված կարգով[18]:

ՀՏՕ մեծ մասը տեղաբաշխված է Երևանում, իսկ 10 մարզին միասին բաժին է ընկնում դրանց շուրջ 46 տոկոսը: Երևանին է բաժին ընկնում կացության կազմակերպման ծառայությունների ծավալի 79 տոկոսը, ինչը վկայում է անհամաչափ տարածքային զարգացման մասին[19]:

Աղյուսակ 2-ից երևում է, որ 2010 թ. համեմատ 2023 թ. հյուրանոցային տնտեսության օբյեկտների քանակը ՀՀ-ում աճել է 310 տոկոսով, 2019 թվականի համեմատ՝ 48 տոկոսով, իսկ ծառայությունների ծավալն աճել է համապատասխանաբար՝ 417 և 39 տոկոսով:

Հյուրանոցային ոլորտը կարևոր դեր է խաղում զբոսաշրջության զարգացման գործում՝ որպես զբոսաշրջիկներին հիմնական ծառայություններ տրամադրող[20]: Թե՛ տեղական, թե՛ ազգային մակարդակում վերջինս նպաստում է տնտեսական, սոցիալական և մշակութային առաջընթացին:

Հյուրանոցների հիմնական առավելություններն են.

- ✓ ապահովում են զգալի եկամուտ թե՛ տեղական բիզնեսի, թե՛ պետական բյուջեի համար,
- ✓ ստեղծում են մեծ թվով աշխատատեղեր՝ ներգրավելով ինչպես ուղղակի (սպասարկող անձնակազմ), այնպես էլ անուղղակի (մատակարարներ) աշխատողների,
- ✓ կարող են խթանել գյուղական կամ հե-

[16] Տեղեկությունը տրամադրել է ՀՀ վիճակագրական կոմիտեն:
[17] Տեղեկատվություն ՀՀ-ում որակավորման կարգ ստացած հյուրանոցային տնտեսության օբյեկտների:
[18] ՀՀ օրենքը «Զբոսաշրջության մասին», հոդված 27, ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2023նթ. դեկտեմբերի 22-ին, ՀՕ-4-Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188696
[19] Tovmasyan, G. & Gevorgyan, M. (2024). Evaluating the role of sustainable tourism in regional development: evidence from Armenia. Regional and Sectoral Economic Studies, 24(1), 23-40, https://www.usc.gal/economet/reviews/eers2412.pdf
[20] Tovmasyan, G. (2020). Evaluating the quality of hotel services based on tourists' perceptions and expectations: The case study of Armenia. Journal of International Studies, 13(1), 93-107. DOI: 10.14254/2071-8330.2020/13-1/6

ռավոր տարածաշրջանների զարգացումը՝ ներգրավելով ներդրումներ և զբոսաշրջիկների,

- ✓ զբոսաշրջիկներին տրամադրում են անհրաժեշտ պայմաններ՝ հանգիստը վայելելու համար,
- ✓ բացի կացությունից, առաջարկում են ռեստորաններ, սպա, մարզական կենտրոններ և այլ ծառայություններ, որոնք նպաստում են զբոսաշրջիկների բավարարվածության մակարդակի բարձրացմանը,
- ✓ ըստ իրենց դիզայնի և առաջարկների՝ կարող են ներկայացնել տեղական մշակույթը, խոհանոցը և ավանդույթները,
- ✓ սերտորեն համագործակցում են տրանսպորտային կազմակերպությունների, տուրօպերատորների և միջոցառումների կազմակերպիչների հետ,
- ✓ կարող են տրամադրել զբոսաշրջային տեղեկատվություն, ուղեցույցներ և աջակցություն,
- ✓ կարող են հանդես գալ կայուն զարգացման նախաձեռնություններով՝ նվազեցնելով իրենց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, աջակցելով տեղական արտադրողներին և այլն:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարող ենք ասել, որ հյուրանոցային արդյունաբերությունը ոչ միայն մեծ դեր ունի զբոսաշրջության զարգացման մեջ, այլև կարող է նպաստել երկրի տնտեսության, տարածքային համաչափ սոցիալ-տնտեսական զարգացմանը: Ընդհանուր առմամբ, զբոսաշրջության համախառն ներդրումը ՀՀ ՀՆԱ-ում 2023 թ. կազմել է 3,4 մլրդ ԱՄՆ դոլար (ՀՆԱ 13,2%-ը): Միաժամանակ, ոլորտն ապահովել է 176 հազար աշխատատեղ[21]: ՀՆԱ-ում հյուրանոցային ծառայությունների ծավալը դեռևս փոքր է՝ 0,61 տոկոս: Ուստի կարևոր է մարզերում ևս ընդլայնել ՀՏՕ թիվը՝ ստեղծելով զբոսաշրջային գրավչություններ և երթուղիներ, ինչի արդյունքում զբոսաշրջային հոսքերը կուղղվեն դեպի մարզեր՝ նվազեցնելով գերբեռնվածությունը Երևանում: Հատկապես գյուղական վայրերում հյուրատների և զբոսաշրջային տների առկայությունը կարևոր է գյուղական բնակավայրերի սոցիալ-տնտեսական զարգացման, զբոսաշրջության միջոցով գյուղական կենցաղի և մշակույթի պահպանման ու արժևորման, գյուղական զբոսաշրջության զարգացման, գյուղական բնակավայրերի պատմամշակութային, բնական, գաստրոնոմիական և այլ ռեսուրսների շնորհիվ՝ զբոսաշրջության տարբեր տեսակների զարգացման համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Թովմասյան Գ., Զբոսաշրջության զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում (մենագրություն), Երևան: «Մեկնարկ» ՍՊԸ, 2020, 622 էջ:
2. ՀՀ կառավարության 2004 թ. հուլիսի 10-ի «Հյուրանոցային ծառայություններ մատուցելու կարգն ու պայմանները սահմանելու, հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման կարգերը և որակավորման ընթացակարգը հաստատելու մասին» N946-Ն որոշում, https://www.arlis.am/documentview.aspx?docid=69452
3. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2024 թ. հունվար-մայիսին, վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Եր., 2024, https://www.armstat.am/file/article/sv_05_24a_460.pdf
4. ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակը 2020 թվականի հունվար-մայիսին, վիճակագրական ժողովածու, ՀՀ ՎԿ, Եր., 2020, https://www.armstat.am/file/article/sv_05_20a_460.pdf
5. ՀՀ օրենքը «Զբոսաշրջության մասին», ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2023 թ. դեկտեմբերի 22-ին, ՀՕ-4-Ն, https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=188696
6. Հյուրանոցային տնտեսության օբյեկտների որակավորման գործընթացի իրականացում, https://mineconomy.am/page/306
7. Տեղեկատվություն ՀՀ-ում որակավորման կարգ ստացած հյուրանոցային տնտեսության օբյեկտների վերաբերյալ, https://mineconomy.am/media/22944/qualified_hotels_03%E2%80%A404%E2%80%A42023.pdf
8. ARMENIA, 2024 Annual Research: Key Highlights, https://researchhub.wttc.org/factsheets/armenia

9. Eco hotel trends & statistics, https://www.condorferries.co.uk/hotel-industry-statistics
10. Hotel industry trends to watch out for in 2025, https://www.mews.com/en/blog/hotel-trends-hospitality-industry
11. Hotel industry worldwide - statistics & facts, https://www.statista.com/topics/1102/hotels/#topicOverview
12. Leading hotel brands based on brand value worldwide in 2023 (in billion U.S. dollars), https://www.statista.com/statistics/732907/most-valuable-hotel-brands-worldwide/
13. Leading hotel companies worldwide as of June 2023, by number of properties, https://www.statista.com/statistics/197869/us-hotel-companies-by-number-of-properties-worldwide/
14. Top hotel statistics, https://www.condorferries.co.uk/hotel-industry-statistics
15. Tovmasyan, G. & Gevorgyan, M. (2024). Evaluating the role of sustainable tourism in regional development: evidence from Armenia. Regional and Sectoral Economic Studies, 24(1), 23-40, https://www.usc.gal/economet/reviews/eers2412.pdf
16. Tovmasyan, G. (2020). Evaluating the quality of hotel services based on tourists' perceptions and expectations: The case study of Armenia. Journal of International Studies, 13(1), 93-107.DOI: 10.14254/2071-8330.2020/13-1/6
17. Елканова Д.И., Осипов Д.А., Романов В.В., Сорокина Е.В., Основы индустрии гостеприимства, Учебное пособие. - М.: Дашков и Ко, 2010., 248 с.
18. Зорин И.В., Каверина Т.П., Квартальнов В.А. Туризм как вид деятельности // Учебник. М.: Финансы и статистика. 2005., https://tourlib.net/books_tourism/zorin.htm

Гаяне ТОВМАСЯН
Эксперт-научный сотрудник исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

РЫНКИ И КОНКУРЕНЦИЯ

РОЛЬ ГОСТИНИЧНОЙ ИНДУСТРИИ В РАЗВИТИИ ТУРИЗМА: ОТ ДРЕВНИХ ВРЕМЕН ДО НАШИХ ДНЕЙ

Гостиничная индустрия играет важнейшую роль в развитии туристического сектора, выступая в качестве основного элемента размещения и обслуживания туристов. Она предоставляет не только жилье, но и необходимую инфраструктуру для отдыха, развлечений и бизнеса. В статье описывается историческое развитие гостиничной индустрии от древних восточных цивилизаций до наших дней, анализируются основные этапы становления сектора гостиничных услуг, современные тенденции развития, а также применение устойчивых практик и инновационных технологий в гостиницах. В статье также обсуждается современное состояние мировой и армянской гостиничной индустрии и исследуются перспективы ее развития в контексте устойчивого социально-экономического роста и территориально сбалансированного развития.

Ключевые слова: *гостиничное предприятие, отель, индустрия гостеприимства, устойчивое развитие, рейтинг, цифровые технологии*

Gayane TOVMASYAN
Expert-scientific researcher at «Amberd» Research Center, ASUE, PhD in Economics, Associate Professor

MARKETS AND COMPETITION

THE ROLE OF THE HOTEL INDUSTRY IN TOURISM DEVELOPMENT: FROM ANCIENT TIMES TO THE PRESENT

The hotel industry plays a pivotal role in the development of the tourism sector, serving as the primary element for accommodation and services for tourists. It not only provides lodging but also essential infrastructure for recreation, entertainment, and business. This article outlines the historical development of the hotel industry, from ancient Eastern civilizations to the present day. It analyzes the key stages in the formation of hotel services, current development trends, as well as the application of sustainable practices and innovative technologies in hotels. The article also discusses the current state of the global and Armenian hotel industries and explores its development prospects within the context of sustainable socio-economic growth and territorially balanced development.

Keywords: *hotel facility, hotel, hospitality industry, sustainable development, rating, digital technologies*